

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹՈՒՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

Գրեց՝ ԶԱՐԵՒԱՆԻ

ԹՈՒՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԹՐԻՔԱՅՈՒՄՆ

ՈՒ ԻՍԼԱՄԱՅՈՒՄԸ*)

Ռուսաստանի Իսլամութիւնը, գրեթէ տարամերժօրէն, կը բաղկանայ թրքական ժողովուրդներէ: Բացառութիւն կը կազմեն Հիւսիսային Կովկասի բնիկ լեռնական ժողովուրդները, վրացական աջառները Բաթումի շրջանին մէջ, իրանական Թաքիկները, որ մնացորդն են Հին Թրանսօքսիանայի — հարաւային Թիւրքիստան—նախկին միատարր բնակչութեան, եւ Վոլգայի աւազանին մէջ գտնուող Ֆիննական մահմետականները, որ, ինչպէս թաշկիները, գիրենք շրջապատող թրքական աշխարհին մէջ լուծուելու վրայ են արդէն:

Ինչպէս Ռուսաստանի Իսլամութիւնը թրքական ժողովուրդներէ կը բաղկանայ, այնպէս ալ, փոխադարձաբար, Ռուսաստանի թրքական բոլոր ժողովուրդները մահմետական են: Միայն Շաքաբները եւ Ալթայեան մէկ երկու պղտիկ ցեղեր, որ քրիստոնեայ են, դուրս կը մնան իրենց եղբայր ժողովուրդներու մահմետական շրջանակէն:

Իսլամի եւ Թրքաբեան կապը իր այս ծաւալին հասած է ժե-րդ դարու սկզբին:

Է-րդ դարուն, Սասանեան կայսրութեան կործանումէն վերջ, արաբները մահմետականութիւնը Խորասանէն Թրանսօքսիանա տարին գէնքի ոյժով եւ Անդրկովկասի վրայով տարա-

ծեցին դէպի Արեւելեան Եւրոպա, Վոլգայի շրջանը:

Արեւելեան Եւրոպայի մէջ Իսլամը ժ-րդ դարուն հասաւ իր հիւսիսային ծայրագոյն սահմանին՝ Թրքական Բուլղարներու կայսրութեան, որ կը գտնուէր միջին Վոլգայի ափին, եւ այնտեղ արմատ ձգեց Բուլղարներուն եւ անոնց հարկատու Ֆիններուն մէջ, մինչեւ Մօսկօյ-Թաթար արշաւը ժ-րդ դարուն: Նաեւ հարաւային Ռուսաստանի սթեփներու թուրք վաչկատուն ցեղերուն մէջ որ ժ-Ա-էն մինչեւ ժ-Գ դարը Քուսաններու տիրապետութեան տակ էին, անդադար կը շատնար մահմետականներու թիւը: Եւ այսպէս, Արեւելեան Եւրոպայի մէջ Իսլամի դիրքը բաւական զօրացած էր Ասիայէն խուժող ժողովուրդները Իսլամութեան դիրքին առաջնորդելու համար:

Թրանսօքսիանայի մէջ Է-րդ դարէն մինչեւ բնիկ Սասանեան հարստութեան (819-999) անկումը իսլամը յաղթանակեց բոլոր միւս կրօններուն վրայ — Զրադաշտական, Բուդդայական, Քրիստոնէական, Մանիքէական, Շամանական եւ այլն:

Այս ժամանակաշրջանին մէջ է նաեւ, որ վճռուեցաւ Սիւննիութեան յաղթանակը Շիաութեան վրայ եւ Բուխարան դարձաւ այն, ինչ որ է դեռ այսօր՝ Սիւննի վարդապետութեան կեդրոնը:

Իսլամի Թրանսօքսիանա մուտքին հետ զուգահեռաբար տեղի կ'ունենար սթեփներէն եկող ժողովուրդներու զաղթաշարժ մը: Թրանս-Օքսիանայի մարմնին վրայ իրար հանդիպեցան Թուրքն ու Իսլամը եւ զաշնակցելով զօրացուցին իրար: Քարախանեաններու կամ Ելէք-խանեաններու օրով, որ կործանեցին Սասանեան հարստութիւնը եւ առաջին թուրք-իսլամական իշխող տունը եղան, արդէն այն աստիճանի հասեր էր երկրին թրքացումը որ Թիւրքիստան անունը, որ մինչ այն Թրանսօքսիանայի վերելք տարածուող սթեփներուն տրուած էր, այժմ սկսաւ դէպի հարաւ տարածուիլ:

*) Այս յօդուածը մտած է «Միացեալ Անկախ Թուրանիս» գրքին ուսերէն թարգմանութեան մէջ: Առաջին մասը, գրեթէ բառացի, առած ենք գերման յայտնի արեւելագէտ Կ. H. Altdorfer-ի Der Neue Orient կիսամսեային մէջ 1919 ին հրատարակած մէկ յօդուածաշարքէն “Die Islamischen Voelker Russlands”, իսկ մնացած մասի պատրաստութեան մէջ լայնօրէն օգտուած ենք մէկէ աւելի աղբիւրներէ, որոնց յիշատակութիւնն ըրած ենք մեր յօդուածի ընթացքին: